Ամէն տարուան 31 Մայիսին, ծխախոտի դէմ արշաւի միջազգային օրուան առիթով, միջազգային կազմակերպութիւններ անգամ մը եւս ահագանգ կը հնչեցնեն եւ կը սկսին արշաւներ կազմակերպել ծխախոտի գործածութեան դէմ, կը խօսին անոր վտանգներուն մասին եւ կոչ կ'ընեն ծխելը դադարեցնելու:

Սակայն օրուան հետ կ'աւարտի նաեւ այդ արշաւը, եւ ծխախոտի գործածութիւնը կրկին «անվտանգ» կը դառնայ:

Լիբանանեան պետութիւնը միջազգային կազմակերպութիւններուն որդեգրած սկզբունքներէն եւ որոշումներէն հետեւ ըլլալով եւ գանոնք ոչ մէկ ձեւով նկատի ունենալով՝ քաղաքացիները զգուշացնելով կը փորձէ Լիբանանի մէջ ծխելու հետզհետէ տարածուող ալիքին պատասխանատուութիւնը իջեցնել իր ուսերէն ու ծխելու որոշում տայն ու անոր վտանգները կրելը ամբողջովին բեռնել լիբանանցիներուն:

Փաստօրէն Լիբանանի մէջ 18 տարիքը չըրոյրած անձեր կրնան առանց որեւէ դժուարութեան ծխախոտ գնել որեւէ նպարավաճառէ կամ խանութի: Հանրային ու գիշերային վայրերու մէջ, եթէ ոստիկանութիւնը տեսնէ պատահական, որոնք կը ծխեն, իրաւունք չունի որեւէ քայլի դիմելու, որովհետեւ այդ առնչութեամբ ոչ մէկ օրէնք կամ որոշում հրապարակուած է պետութեան կողմէ:

1993 թուականին առողջապահութեան նախարարութիւնը անարարին վայրերու մէջ ծխելը ամբողջութեամբ արգելելու որոշում տուաւ, սակայն այսօր միայն կարգ մը հիւանդանոցներու մէջ կը գործադրուի այդ որոշումը, իսկ առ վայրերու մէջ քաղաքացիները ծխելու ամենաազատութեամբ, առանց նոյնիսկ մտածելու, թէ միայն ինք չէ վնասուողը:

1995ին, թիւ 394 որոշումով, օրուան նախարարութիւնը կրկին շեշտը դրաւ ծխելու վտանգին վրայ եւ արգելեց գաշն՝ սպառնալով, թէ անիկա կրնայ առաջնորդել համապատասխան պատիժի, իսկ զգուշացումէն ետք կրկնուելով պարագային ենթակա մէկ ամիսէն մինչեւ 6 ամիս կրնայ բանտարկուել ու վճարել 15 միլիոն Լ. ոսկի՝ իրրեւ տուրք:

Սակայն, դժբախտաբար, այս որոշումը եւս մնաց դարակներուն մէջ, որովհետեւ մէկը չգտաւ զինք գործադրութեան դնող:

1998ին օրուան առողջապահութեան նախարարը ներկայացուց ծրագիր մը, որուն մէջ ան շեշտեց, թէ լսատեսողական բոլոր լրատուամիջոցներուն համար պիտի արգելուի ծխախոտի ծանուցումներ գետեղել կամ սփռել, սակայն այս ծրագիրը եւս չիրագործուեցաւ ներքին քաղաքական ու աւելտրական պատճառներով:

Մայրուղիներուն վրայ եւ փողոցներուն մէջ ծխախոտի ծանուցումները արգելելու առնչուող նախարարին ներկայացուցած ծրագիրին տակ ստորագրեցին միայն 10 երեսփոխաններ:

Միւս կողմէ, ծխախոտի ընկերութիւններն ու արտադրող հաստատութիւնները գտած են իրենց ձեռքը երկրասարդները գրաւելու՝ յաւելելով ընտրութիւններ, զեղչեր եւ նուէրներ տալով քաղաքացիին:

Անոնք նոյնիսկ շատ յաճախ կը հովանաւորեն մարդական ձեռնարկներ եւ խաղեր, որպէսզի կարելի ըլլայ աւելի մեծ թիւով երիտասարդներու ներկայացնել ծանուցումները:

Տարեկան 400 միլիոն տոլար ներդրում ունեցող ծխախոտի ընկերութիւններ իրենց շահէն 4 միլիոն տոլար կը տրամադրեն ծանուցումի նկարահանման եւ սփռումի:

Անոնք թիրախը յատկապէս երիտասարդութիւնն է, որ ներկայիս ունի այն համոզումը, թէ ծխելը անկախութեան եւ ինքնավստահութեան նշան է, թէ ծխող տղամարդիկ աւելի դիւրաւ կը գրաւեն իրական սեռը, եւ թէ անիկա աւելի զօրաւոր նկարագիր ունենալու ցուցանիշ է:

Հետաքրքրական է, որ այս մտածելակերպը լուեկայն տարածուած է ու շատ մեծ նշանակութիւն ունի երիտասարդութեան եւ պատանեկութիւնը աւարտող ու երիտասարդութեան սեմին կանգնած անձերուն մօտ:

Ուսումնասիրութիւնները ցոյց տուած են, թէ նոր ծխել սկսողներուն մեծամասնութիւնը երիտասարդներն են, եւ թէ ծխողներուն 75 առ հարիւրը ծխել սկսած է 20 տարեկանէն առաջ:

Ըստ անոնց, ծխախոտը տարեկան 4 միլիոն անձի կեանք կը խլէ, այսինքն՝ օրական 11 հազար հոգիի հաշուով, եւ կը նախատեսուի, որ անոնց թիւը 10 միլիոնի հասնի մինչեւ 2020 թուական, իսկ 1,34 միլիոնի՝ 2050 թուականին:

Սերունդներու փոփոխութեամբ նաեւ կը փոխուի անոնց կատարած փորձերուն թիւին չափանիշը: Միլիոն հաշուով ծխողներուն 15-8 առ հարիւրին տարիքը 15էն 20ի միջեւ է, իսկ 12 առ հարիւրը՝ 15 տարեկանէն վար:

Լիբանանի մէջ ծխելը տարածուած է բնակչութեան բոլոր խաւերուն, յատկապէս երիտասարդութեան մօտ: Լիբանանցի պատանիներուն 40 առ հարիւրը փորձած է ծխել զէթ մէկ անգամուան համար, իսկ իրական սեռին մօտ ծխողներուն թիւը հասած է 56,9 առ հարիւրի եւ այդ չափանիշը հետզհետէ կ'աճի:

Լիբանանցի ծխողներուն 53,6 առ հարիւրը երիտասարդներ են եւ անոնց թիւը օրէ օր աճ կ'արձանագրէ: Լիբանանցիները տարեկան 600 միլիոն տուրք ծխախոտ կը սպառեն, այսինքն 700 տոլար կը ծախսեն ծխելու նպատակով:

Լիբանանի մէջ առողջապահութեան նախարարութիւնը յայտնաբերած է 300 քաղցկեղի պարագայ, որոնց պատճառը ծխախոտն է: Տարեկան 3500 լիբանանցիներ կը մահանան ծխախոտի պատճառով, իսկ ամէն տարի ծխող երիտասարդութեան վրայ 30 հազար ծխախոտի մոլի երիտասարդ կ'աւելնայ:

Բժշկական կազմակերպութիւններու կատարած ուսումնասիրութիւններուն համաձայն, թոքերու քաղցկեղ ունեցողներուն 87 առ հարիւրին պատճառը ծխախոտն է, իսկ սրտի հիւանդութիւններէ տառապողներուն 60 առ հարիւրը ծխողներ են եւ ծխախոտն է անոնց կաթնածններուն պատճառը:

Ըստ այդ ուսումնասիրութիւններուն, աշխարհի վրայ 8 երկվայրկեանի մէջ մէկ հոգի կը մահանայ ծխախոտէն:

Ծխելը մեծ տարածում գտած է նաեւ դպրոցներուն մէջ, ուր նախապէս գոյութիւն չունէր այս մտահոգութիւնը, սակայն վերջին տարիներուն արշաւներ ծայր առած են նաեւ դպրոցներուն մէջ: Մեծ է թիւը այն աշակերտներուն, որոնք ամէն զրօսանքի կ'երթան ու կը ծխեն եւ անոնք ծխախոտի իսկական մոլիները դարձած են:

Լիբանանի մէջ կատարուած ուսումնասիրութեան համաձայն, ներկայիս դպրոցներուն մէջ կան 6 հազար ծխողներ, որոնց տարիքը կը տատանի 13էն 15ի միջեւ:

Յաւայի է նաեւ այն, որ ծնողները կը ծխեն իրենց զաւակներուն ներկայութեան եւ միայն իրենք չեն, որ կը վնասուին, այլ նաեւ՝ իրենց զաւակները, որոնք նոյնքան վտանգի ենթակայ են, որքան՝ ծխողները:

Հանրային վայրերու մէջ եւս ենթակա իր անձէն գտած մեծապէս կը վնասէ նաեւ չուրջիներուն ու միջավայրին:

Փաստուած է, թէ ծխախոտը իր մէջ կը պարունակէ այնպիսի նիւթ մը, որ կը գործածուի միջատներու սպանութեան դեղերու պատրաստութեան մէջ:

Ծխախոտի ընկերութիւնները վերջերս սկսած են աւելցնել անոնց մէջ եղած թմրեցուցիչի տոկոսը, որպէսզի երիտասարդներն ու պատանիները աւելի արագ մոլի դառնան ծխախոտի:

Որքան ալ խօսուի ու զրուի ծխախոտին ու անոր վտանգներուն մասին, իրողութիւնը այն է, թէ ծխողներուն թիւը աննկարագրելիօրէն կ'աճի եւ այդ ընթացքին կասեցումը բաւական դժուար եւ նոյնիսկ անկարելի սկսած է ըլլալ:

Վնասը նուազագոյնի իջեցնելու համար միջազգային կազմակերպութիւններ կոչ կ'ընեն գոնէ մանուկներուն եւ պատանիներուն ներկայութեան չծխել թէ՛ գանոնք վտանգէ հեռացնելու եւ թէ անոնց օրինակ չհանդիսանալու համար:

ՄՆՆԴԱԳԻՏԱԿԱՆ

Առողջ Մնալու Գաղտնիքները

ՄՆՆԴԱՐԱՐ ԴԵՂԱՏԱՏԵՐԸ ՕԳՏԱԿԱՐ ԵՆ, ԹԷ ՎՆԱՍԱԿԱՐ

Կենսանիւթի եւ հանքային ուժի դեղահատերը մեծ ընդունելութիւն կը գտնեն շատերու մօտ: Մէկ օրէն միւսը շատ աւելի կ'աւելնան կենսանիւթի դեղահատերը գնելու նպատակով դեղարան յաճախողներուն թիւը: Կենսանիւթերու եւ հանքերու կողմէն այս դեղահատերը շատեր նաեւ կը պարունակեն այլ սննդարար տարրեր, ինչպէս՝ բուսական ձէթ, մետաղներ եւ այլն:

ԻՆՉ ԵՆ ՄՆՆԴԱՐԱՐ ԴԵՂԱՏԱՏԵՐԸ

Մննդարար դեղահատեր գործածելու գլխաւոր նպատակը մարմինի հիմնական սննդական պէտքերը հայթայթելն է, մասնաւորաբար՝ երբ մարմինը այդ անհրաժեշտ սնունդը չի ստանար ուստի թիւն միջոցով: Անհրաժեշտ է գիտնալ, որ անոնք, որոնք յատուկ սննդականոնի կը հետեւին եւ միեւնոյն ատեն սննդարար դեղահատեր կը գործածեն, նուազ հիւանդութիւններու կ'ենթարկուին, քան անոնք, որոնք անկանոն եւ անկազմակերպ ձեւով կ'ուտեն: Ոմանք հաւասարակշռուած սննդականոնի հետեւելով հանդերձ, պէտք ունին սննդարար դեղահատերու: Մարմինը կարիքը կը զգայ վերոյիշեալ դեղահատերուն, երբ ուստի թիւն միջոցով բաւարար կենսանիւթ չի ստանար: Դեղահատերը անհրաժեշտ են անոնց համար, որոնք որոշ տեսակի ուստիքներ չեն կրնար մարսել, մասնաւորաբար՝ գեղձերու հարցեր ունեցողները, որոնք մարմինը կարողութիւն չունի մարսելու ուստիքներուն մէջ գտնուող կարգ մը սննդարար տարրեր: Այն անհատը, որուն մայրը յղութեան շրջանին անհրաժեշտ եւ բաւարար սնունդ չէ ստացած, անպայման պէտք ունի սննդարար դեղահատերու՝ իր մարմինն մէջ ամբարելու համար պակաս տարրերը:

Կարգ մը պարագաներու, մարմինը անհրաժեշտ կենսանիւթերը չ'ընդունի: Այն անհատները, որոնք շարունակական յոգնութենէ, յիշողութեան սկզբութենէ եւ չափազանց ջլգայնութենէ կը տառապին, բաւարար Պէ.12 կենսանիւթ չեն ստանար, որովհետեւ անոնց մարմինը այս կենսանիւթը ծծող անհրաժեշտ տարրը չ'արտադրեր: Հետեւաբար այդ պիտի նախապայման պէտք է Պէ.12 դեղահատեր օգտագործեն: Պէ.12 կենսանիւթ կ'աշխուժացնէ եւ առողջ կը պահէ անհատը:

Մննդարար դեղահատեր պէտք է օգտագործել, երբ շարունակական կերպով թունաւոր օդ կը ներշնչենք եւ կամ թունաւոր ջուր կը խմենք: Եթէ կը ծխենք, անպայման պէտք է օգտագործել Մէ. կենսանիւթ պարունակող դեղահատեր, որովհետեւ ծխախոտը կը դադարեցնէ Մէ. կենսանիւթին ազդեցութիւնը:

Իրարմէ կը տարբերինք ոչ միայն մեր ապրելակերպով եւ սովորութիւններով, այլ նաեւ՝ մեր քիմիական կազմուածքով: Ամէն մէկս պէտք է գիտնալ իր մարմինն մէջ գտնուող պակաս տարրերը, որպէսզի ապահովէ գանոնք դեղահատերով, եթէ կարիքը զգայ:

ՔԱՐԼԱ ԵԱՐՏԵՄԵԱՆ

Շար.ը՝ էջ 8



ԱՖՀԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE



AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՅՈՒՑԱՍՐԱԸ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ
 ԳՐԱՍԵՆԱԿ՝ ԱՖՀԻԼ, ԱՖԵՏԻ ԶԵԼԸ, Բ. ՅԱՐԿ
 ԳՆՈ (02) 242556/7

**NO MATTER WHAT YOU NEED...
 ... OR WHERE YOU NEED.**

ԾԽԵԼԸ ԴԱԴՐԵՑՈՒՐ ՈՒ ՊԻՏԻ ԶԶՂՋԱՍ

Հազիւ ծխելը դադարեցնելու, առողջութիւնը զգալիօրէն պիտի բարելաւուի:



- 20 վայրկեան ետք արեան ճնշումը եւ սրտի զարկերը պիտի վերադառնան իրենց բնական ընթացքին, իսկ ձեռքերը ու ոտքերը չ'ընթացնեն:
- 8 ժամ ետք արեան մէջ թթուածինի տոկոսը բնական պիտի ըլլայ:
- 24 ժամ ետք սրտի կաթուած ունենալու վտանգը նուազագոյնի պիտի հասնի:
- 48 ժամ ետք հոտառութիւնը պիտի բարելաւուի:
- 12 շաբաթ ետք արեան շրջապայտիւնը բնական պիտի ըլլայ եւ թոքերուն աշխատանքը 30 առ հարիւր տոկոսով պիտի բարելաւուի:
- 1 - 9 ամիս ետք շնչառութեան ոչ մէկ հարց, բնական աշխուժ տրամադրութիւն պիտի ունենաս, քիթի ու կոկորդի ոչ մէկ հարց կամ նեղութիւն պիտի գաս: Թոքերը պիտի սկսին իրենց իրենց մաքրելու եւ բնական ձեւով գործել:
- 1 տարի ետք սրտի կաթուած ունենալու վտանգը 50 առ հարիւրով պիտի նուազի:
- 10 տարի ետք մարմինը կը վերադառնայ իր բնական վիճակին:



Կնոջական

ՓՈՐՁ ԸԱՐՑԱՐԱՆ

ԻՆՉ ԲԱՆ ԿԸ ՓԱՓԱՔԻՔ ՓՈԽԵԼ...

Տեւաբար զարգացող եւ յառաջդիմող ընկերութեան մէջ ի՞նչ բան կ'ուզէք փոխել, դուք ձե՞զ, ուրիշնե՞րը, թէ աշխարհը...

1

Ի՞նչ խորհուրդ կու տաք աշխարհին.
Ո՞ր մարդիկ աւելի աջակցին իրարու:
Բ՝ Մարդ իր գործով լաւ օրինակ պէտք է ծառայէ:
Գ՝ Ուրիշը հասկնալու համար մարդ նախ ինքզինք պէտք է ճանչնայ:

2

Ո՞ր պաշտօնը կ'ընտրէիք.
Ա՝ Ընկերային ծառայող, որպէսզի մեծ թիւով մարդոց ծանօթանաք:
Բ՝ Ոչ մէկ պաշտօն, որպէսզի բարեսիրական կազմակերպութիւններու օժանդակէք:
Գ՝ Մեծ ընկերութեան մը տնօրէնը, որպէսզի աշխարհը մասամբ փոխէք:

3

Վերջին 10 տարիներուն քանի՞ անգամ բնակարան փոխած էք.
Ա՝ Երբեք:
Բ՝ 2-էն 4 անգամ:
Գ՝ 4 անգամէն աւելի:

4

Ամառի կառատան մը մէջ հետապնդուելու տպաւորութիւնը կ'ունենաք.
Ա՝ Ձեր կարելին կ'ընէք անտարբեր ձեւանալու:
Բ՝ Ձեր պայուսակին մէջ սուր իր մը կը փնտռէք ինքնապաշտպանութեան համար:
Գ՝ Կ'աղօթէք:

5

Ո՞ր գեղանկարիչը կը հաւնիք.
Ա՝ Կոկէնը, որ ամէն բան ձգեց եւ թահիթի պնաց գծելու:
Բ՝ Թուրք-Լոթիէնը, որ յաղթահարեց իր հաշմանդամութիւնը:
Գ՝ Վանկոկը, որ իր ամբողջ կեանքը տրամադրեց իր կիրքին:

6

Շարժապատկերի սրահ կ'երթաք.
Ա՝ Փախուստ տալու համար:
Բ՝ Խնդալու համար:
Գ՝ Ընկերութիւնը աւելի լաւ հասկնալու համար:

7

Գործի մէջ ձեր պաշտօնակիցները առաւելաբար.
Ա՝ Համակերպին են:
Բ՝ Մակերեսային են:
Գ՝ Ինչպէս ամէն տեղ՝ լաւն ալ կայ, գէշն ալ:

8

Երբ ձեր մայրը խրատէ ձեզ.
Ա՝ Կը խնդրէք, որ չհարուսնակէ:
Բ՝ Կ'ուրարխանք եւ բարխտուր կը զգաք, որ խրատող մը ունիք:
Գ՝ Կը մտածէք, որ երբեք ձեզ չէ հասկցած:

9

Ձեր կեանքին ընթացքին գուշակի դիմած էք.
Ա՝ Մէկ անգամ:
Բ՝ Առնուազն չորս անգամ:
Գ՝ Բազմաթիւ անգամներ:

10

Ձեր ներմացումը... (intuition).
Ա՝ Հազուադէպօրէն կը սխալի:
Բ՝ Գրեթէ բացակայ է:
Գ՝ Կը զգուշանաք անկէ:

11

Ձեր շրջապատը ձեզ կը գտնէ.
Ա՝ Անպատկառ:
Բ՝ Անգիտակից:
Գ՝ Ոչ վճռական:

12

Ձեր ոտքը կոտրեցիք եւ երկար ժամանակ անշարժութեան պիտի մատնուիք.
Ա՝ Լաւ առիթ մըն է՝ աշխարհին հարցերուն մասին աւելի խոր մտածելու:
Բ՝ Աշխարհը կը փլի ձեր գլխուն:
Գ՝ Կը ջանաք համբերութեամբ յաղթահարել այս



Գժուարութիւնը:

13

Երկու հոգիի սիրահարած էք. վճռելու համար.
Ա՝ Կը դիմէք աստղերուն:
Բ՝ Կը սպասէք, որ մէկէն մէկը հրաժարի:
Գ՝ Առանձին կը ճամբորդէք՝ մտածելու համար:

14

Ձեր տան ճամբան նորոգութեան պատճառով անակնկալօրէն փակուած է.
Ա՝ Ձայրացած՝ ձեր ճամբան կը փոխէք:
Բ՝ Ուրախ՝ ինքնաշարժը կը շարժէք եւ խանութներուն ցուցափեղկերը դիտելով կ'ուղղուիք տուն:
Գ՝ Դուք ձեզ կը մեղադրէք, որ ինչո՞ւ թաղեցի ի մը հետ չիօսեցաք ճամբայ ելլելէ առաջ:

15

Կը սիրէք.
Ա՝ Անակնկալ ճամբորդութիւնները:
Բ՝ Հեռուոր ճամբորդութիւնները:
Գ՝ Մրագրուած, խմբական ճամբորդութիւնները:

16

Ձոյգի մը կեանքին յաջող ընթանալուն համար.
Ա՝ Պէտք է, որ անոնք միօրինակութենէ դուրս գան:
Բ՝ Ընկերական ըլլան եւ ուրիշներուն բացուին:
Գ՝ Մէկը միւսին ազատութիւնը պէտք չէ կաշկանդէ:

ՊԱՏԱՍԽԱՆ

◆Եթէ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը ▲ է, կը փափաքիք աշխարհը փոխել՝ կարելի եղածին չափ մեծ թիւով մարդիկ երջանկացնելու համար: Ձեր ամբողջ կարելիութիւնները ի սպաս կը դնէք մեծ դատերու իրականացման: Միութիւններու եւ կազմակերպութիւններու նախնայական կ'օգնէք հիւանդներուն, անօթիներուն, աղետեալներուն: Արդիւնքները միշտ ալ ձեր ակնկալածը չեն, բայց եւ այնպէս, կը յարատեւէք եւ գոհուցանուած լուրջ ազդեցութիւնը ունիք ազգային փոքրած ըլլալու:

	ա	բ	գ
1	▲	■	●
2	■	●	▲
3	●	▲	■
4	■	▲	●
5	▲	■	●
6	▲	■	●
7	▲	●	■
8	▲	■	●
9	▲	■	●
10	▲	●	■
11	●	▲	■
12	■	●	▲
13	■	●	▲
14	●	▲	■
15	●	▲	■
16	●	▲	■

◆Եթէ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը ■ է, կ'ուզէք նախ դուք ձեզ ճանչնալ. ապա՝ դատել ուրիշները: Ձեք վարանքի հոգեբանութիւն, գուշակի կամ կրօնաւորի դիմելու՝ դուք ձեզ բարելաւելու եւ շրջապատին հետ աւելի լաւ յարաբերելու համար:

Ձեր կարծիքով, կեանքի իմաստ տալու լաւագոյն միջոցը ուրիշը երջանկացնելն է, իսկ ուրիշը երջանկացնելու համար պէտք է յարաբերիլ. եւ լսել զանոնք: Վերջին հաշուով, երջանկութեան բանալին ձեր մէջն է:

◆Եթէ ձեր պատասխաններուն մեծամասնութիւնը ● է, ձեր կարծիքով, եթէ աշխարհի մէջ ամէն բան սխալ կ'ընթանայ, յանցանքը ուրիշներուն է՝ սկսելով ձեր ամէնէն մօտիկ անձերէն: Անխնայ պայքարող մըն էք. ուրիշները սրբազրկուելու եւ ընթացքի մէջ դնելու գերհիգի մը մէջ էք:

Կեանքը բարելաւելու ձեր պատկերացումը հետեւեալն է. ուրիշները սրբազրկուելու փոխելու աւելի լաւ աշխարհ մը ստեղծելու համար:

www.lemagan.com

ՄԵՐ ԸԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՆԱՄԲԱՐՁՈՒՄ

Համբարձման տօնը զուգահիսեցաւ անցեալ Հինգշաբթի, 29 Մայիսին: Տրուած ըլլալով, որ այդ օրը թերթը լոյս չտեսաւ, Համբարձման տօնը մշտնջող եւ բացատրող այս գրութիւնը կու տամք մեր այսօրուան կնոջական էջով:

Ընթերցողը թող ժամանակավրէպ չլինի զայն, տրուած ըլլալով, որ այս տօնին հետ կապուած են զագային հետաքրքրական աւանդութիւններ, որոնց կ'արժէ ծանօթանալ:

Չամբարձման ճիշդ քառասուն օր ետք կը նշուի Համբարձման, կամ ինչպէս ոմանք կը կոչեն, վիճակ կամ կաթնապուրի տօնը: Ասիկա Քրիստոսի շարժումն է առնելէն ետք երկրի վրայ քառասուն օր շրջելու եւ ապա՝ երկինք համբառնալու պատկերացումն է քրիստոնէական տօնացոյցին մէջ:

Համբարձման շարժումն է, ամէն տարի տարբեր օր կը նշուի, սակայն ան միշտ կը զուգահիսուի Հինգշաբթի օրուան, իսկ հանդիսութիւնները կը սկսին Չորեքշաբթի օրը: Այդ Չորեքշաբթի կինները «Մարգարէի Կիրակի» կը պահէին, այսինքն կարգ մը աշխատանքներէ կը խուսափէին ի պատիւ «ծաղկամօր», որպէսզի ան իրենց երեխաներէն հետու պահէ «ծաղիկ» ու «կարմրուկ» հիւանդութիւնները:

Համբարձման օրը բոլոր տոներուն մէջ վաղ առաւօտուն կաթնապուրի կ'եփէին: Ոմանք կաթնապուրին տակ վառող կրակին մէջ կ'ալիւնէին եօթը սպօթքոյ հանգուցուած ձեռքի կապը:

Հայաստանի որոշ շրջաններուն մէջ կաթնապուրի կ'եփէին խմորով՝ արտերուն մէջ եւ քանի մը շերտի կը թափէին արտերուն շուրջը՝ բերքի առատութիւնն ապահովելու եւ արտը կարկուտէն ու վնասակար միջատներէն պաշտպանելու համար:

Համբարձման օրուան կաթնապուրը մատաղ էր, անիկա կը բաժնուէր անուագն եօթը տուն:

Համբարձման օրուան շրջաններուն մէջ կաթնապուրի կ'եփէին խմորով՝ արտերուն մէջ եւ քանի մը շերտի կը թափէին արտերուն շուրջը՝ բերքի առատութիւնն ապահովելու եւ արտը կարկուտէն ու վնասակար միջատներէն պաշտպանելու համար:

Մարգարէի օրը, ըստ աւանդութեան Վարդանանունով կոչուած մըն է որուն քրիստոնէութիւնը ընդունելուն պատճառով Հետապնդեց իր կոտորածը, որ անոնք միօրինակութենէ դուրս գան: Արեւմտեան Հայաստանէն փախչելով՝ եկեր ապաստանէր է Աշտարակի մօտ գտնուող Արայի լեռը: Հայրը գինք հետապնդեց, եւ շրջանի հովիւները մատնեցին Վարդանի թաքստոցը: Յուսահատ Վարդանանունը հաստատուելէ առաջ Աստուծոյ հետ խնդրեց, որ ծաղիկ ու կարմրուկ հիւանդութիւններուն մասնակցները իր անունով բժշկուին: Աստուծոյ կատարեց, անոնք հետապնդեցին, խնդրանքը, եւ Վարդանէն աղօթող մայրերուն գաւակները կը բուժուին այս հիւանդութիւններէն:

Նոյն առիթով Վարդանէն անիծեց իր տեղը մատնած հովիւները, վերջիններս եւ իրենց ոչխարները քարացրեցին: Մինչեւ


Բարխտուր, դրական վիճակի պարագային խումբը կ'երգէր. «Վիճակ, վիճակ, դուրս ելաւ, Վիճակի վրան լոյս ելաւ, էս ի՞նչ բարի բարխտ ելաւ...»

Վիճակի արարողութիւնը վերջ գտնելէն ետք, փարչին ջուրը կը թափէին արտերը: Ծիրակի շրջանին մէջ հիւանդներուն տէրեւորը այս ջուրէն տուն կը տանէին եւ իրենց հիւանդին գլխուն կը քսէին, որպէսզի վերջինս շուտ առողջանայ ու կազդուրուի:

Երեկոյան, տունդարձի երգը կը հաստատէր տօնին աւարտը, կը սկսէին աշխատանքով յազդեցած օրերը:

«Համբարձման Երկուշաբթին, Առէք փոցին ու գեղանգին...»

ԽՈՒՆԱԳԻՐ



Բաղադրութիւն՝ 6-8 անձի համար

Պտղունց մը աղ 250 կրամ կակուղ կարագ

Ղապ կըր ձեւաւորելու երեսը հաւկիթի դեղնուցով ձեփելու եւ 350 ջերմաստիճանով եփելու, մինչեւ որ բոկեղները ոսկեգոյն դառնան:

Ղապ կըր ձեւաւորելու երեսը հաւկիթի դեղնուցով ձեփելու եւ 350 ջերմաստիճանով եփելու, մինչեւ որ բոկեղները ոսկեգոյն դառնան:

Պատրաստեց՝ ՇՈՒՇԻԿ ՍԱԻԻՍԱԳԱԼԵԱՆ

ՇՐՋԱՆԸ ՑՆՑԱԾ...

Շարունակում՝ 4րդ էջին

Ավելայտ է, որ ներկայ գարգացումները իրենց հանգուցալուծման հասանելու պարագային, ամբողջ Անդրկովկասի շրջանը պիտի յայտնուի ուսուցողական խորացող համարակուժի եւ ամբերկեւիլամական զօրացող դերակալութեան զուգահեռ ուղղութիւններուն արանքին մէջ: Այսպիսի գուգահեռ

հեռ գործընթացները յղին Անդրկովկասի մէջ մինչեւ հիմա աննախադէպ աշխարհաքաղաքական ճեղքուածքի յառաջացման հեռանկարով, որովհետեւ սկիզբ առած առեւտուրի բարեյաջող աւարտին պարագային, Հայաստանն ու վրաստանը կրնան յայտնուիլ առաջին, իսկ Ազգրպէյճան՝ երկրորդ աշխարհ

հաքաղաքական ուղղութեան ազդեցութեան գոտիին մէջ: Ուրեմն, մինչեւ հիմա աշխարհաքաղաքական յամաստ ունեցող «Անդրկովկաս» ընդհանուր հասկացողութեան փոխարէն ի յայտ կրնայ գալ գերպետութիւններուն կողմէ

«Հայոց Աշխարհ» (Արեւմտահայերէնի վերածում)

ՄՆՆԴԱՐԱՐ ԴԵՂԱՎՈՒՄԵՐԸ...

Շարունակում՝ 6րդ էջին

ՄՆՆԴԱՐԱՐ ԳՎԱԿԱՐ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ ՌԵՏԵԼԻՔՆԵՐԸ

Դեղահատերուն մասին խօսելը անհրաժեշտ էր ըլլար, եթէ ամէն մէկ անհատ կարենար ուսելիքի միջոցով ստանալ մարմինին անհրաժեշտ սնունդը, սակայն այս մէկը կարելի է միայն համար: Ժողովուրդին մեծամասնութիւնը կը փնտռէ համեղ, փոխանակ փնտռելու այն, ինչ որ պէտք ունի մեր մարմինը:

Այսօր մենք ենթարկուած ենք ուսելու քիմիական տարրերով անող բանջարեղէններ եւ պտուղներ, որոնք սնունդին մեծ մասը կորսուած է: Իսկ գալով ճերմակ շաքարին, զոր գրեթէ ամէն օր կ'օգտագործենք, անիկա շատ փնտաւար է մարմինին: Վստահարար մեր այսօրուան սպանած ուսելիքները սննդական մեծ արժեք չեն ներկայացնել, որովհետեւ հողը կ'ենթարկուի շարունակական եւ յարատեւ ցանքի եւ անոր մէջ կը ներդրեն գանազան տեսակի քիմիական նիւթեր:

Սննդարար դեղահատերը կարելի է օգտագործել բժշկին ցուցմունքներով: Անհատը պէտք է բժշկական քննութիւններ կատարէ, ինչպէս՝ արեան քննութիւն, որուն հիման վրայ բժշկին արտօնութեամբ կը սկսի օգտագործել դեղահատերը: Պէտք է յիշեցնել, որ դեղահատերուն կողքին անհրաժեշտ է հետեւիլ ուսումնասիրած սննդական տեսակի քիմիական նիւթերը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԼՈՒՍԻՆ ԱՊՏԱԼԵԱՆԻ մահուան Բ. տարեկիցն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Յունիս 2003, Նոր Մարտի Սրբոց Զատասնից Սանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՍԱՌԱ ՊՈՅԱԾԵԱՆԻ մահուան Բ. տարեկիցն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Յունիս 2003, Էջրեֆիէի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ՅՈՎԱԷԹ ԱՇԾԵԱՆԻ մահուան Ա. տարեկիցն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 8 Յունիս 2003, Ժուճիէի Ս. Յարութիւն եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ա. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5453

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

- | | |
|--|---|
| 1. Երկուորեակ - Հայ գուսան: | 1. Որոշ նպատակի համար յատկացուած դրամազուլու: |
| 2. Արու էշ - Եւրոպական ոստան: | 2. Մարտունիի զիւղերէն - Մուրացկանի տոպրակ: |
| 3. Հայոց ժԱ. ամիսը - Դռնդու: | 3. Կերպասի լայնք - Արական անուն: |
| 4. Կրկնուած բաղաձայններ - Աթենասի վահան: | 4. Գարեգին Սրուանձտեանցի ծննդավայրը: |
| 5. Նիհար - Յուցական ածական: | 5. Ուրուկազիմ - Մանր դրամ: |
| 6. Նոյն գիրերը - Դրկից տառեր - Հայաստանի քաղաքներէն: | 6. Գիշտոյն թռչուն - Սղոցարեան: |
| 7. Յովհաննայի հայրը - Գազար: | 7. Ծափոնական դասական թատրոն - Պէտք: |
| 8. Թեթեւ ուսելիք - Արգատ: | 8. Կրկնուած բաղաձայններ - Գէշ: |
| 9. Կեանքի զրաւ - Անտառի թագաւորը: | 9. Իրանահայ օրաթերթ - Փայլուն: |
| 10. Նախահայրեր - Վարի արու ոչխար: | 10. Զաղը - Արական անուն - Արուերէնէն: |
| 11. Մորթէ պարկ - Զայնակից գիրերը - Նորհրդողանչային պատկեր: | 11. Լար, կարճ - Կանգուռ երկանաքար: |

ԹԻՒ 5452

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	8	Ո	Ր	Ն	Կ	Ա	Ս	Թ	Ա	Ս
2	Օ	Ր	Ե	Ր	Ի	Ո	Ղ	Ո	Ր	Կ
3	Շ	Ո	Ի	Ա	Ր	Ո	Ւ	Մ	Ք	Ա
4	Ա	Ս	Ա	Ն	Ա	Ս	Ի	Ա	Ս	Ս
5	Ր	Կ	Կ	Թ	Ա	Ն	Ս	Ս	Ս	Ս
6	Ա	Ր	Ա	Ջ	Ի	Ք	Կ	Ր		
7	Ն	Ա	Ն	Կ	Գ	Ե	Ղ	Ա	Ր	Գ
8	Ա	Ս	Ն	Ե	Ր	Ա	Ս	Ս	Ս	Ս
9	Ա	Ս	Ք	Ա	Ջ	Ա	Ս	Ս		
10	Ս	Ի	Ս	Ո	Ի	Ր	Ա	Ն	Ա	Ա
11	Ա	Ս	Ր	Ո	Ց	Ե	Ր	Ս	Ս	Ս

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամանոցներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	32,40 - 32,50 լ.ո.
Իրաքեան տինար	4850,00 - 4860,00 լ.ո.
Քուէյթեան տինար	5035,00 - 5060,00 լ.ո.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 լ.ո.
Պահարէյսեան տինար	3985,00 - 4010,00 լ.ո.
Ա.Մ.Էմիրութեան տինար	410,75 - 412,75 լ.ո.
Քաթարեան ռիալ	413,75 - 415,75 լ.ո.
Սէուտական ռիալ	402,00 - 404,00 լ.ո.
Օմանեան ռիալ	3895,00 - 3920,00 լ.ո.
Եգիպտական կիւնէ	249,00 - 259,00 լ.ո.
Անգլիական սթերլին	2459,00 - 2469,00 լ.ո.
Չուիցերիական ֆրանք	1148,00 - 1153,00 լ.ո.
Թրքական լիրա	104,50 - 105,00 լ.ո.
Կիպրական փաուստ	3000,00 - 3025,00 լ.ո.
Ճափոնական հապար եէն	12,60 - 12,70 լ.ո.
Ափրիկեան հապար ֆրանք	13,20 - 13,25 լ.ո.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ո.
Քանադական տոլար	1110,00 - 1115,00 լ.ո.
Աւստրալիական տոլար	998,00 - 1003,00 լ.ո.
Եւրօ	1765,00 - 1775,00 լ.ո.

● ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	141,500 - 146,500 լ.ո.
Իրանեան մէկ ոսկի	127,000 - 132,000 լ.ո.
Օմանեան մէկ ոսկի	117,500 - 122,500 լ.ո.
Մեքսիքական փէտուս	675,000 - 695,000 լ.ո.
Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի	17,590,000 - 17,790,000 լ.ո.
Մէկ օնս ոսկի	365,00 - 365,50 \$
Մէկ օնս արծաթ	4,52 - 4,54 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	1.1700 - 1.1705
Քանադական տոլար	1.3558 - 1.3568
Չուիցերիական ֆրանք	1.3125 - 1.3135
Ճափոնական եէն	118.56 - 118.66
Մէկ սթերլին	1.6303 - 1.6313

Մէկ քիլոկրամ 565 դրամ

● ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Գիճի Ա. ճշդում	Գիճի Բ. ճշդում	
Ա. կարգ	4 6/8	4 7/8
Բ. կարգ	4 7/8	5

ԼՈՒՍԱՅԱԹՈՒ ԱԼԵՋՍԱՆԵԱՆ ՀԵՐ. 01-252852

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

- ☆ **ԽՈՑ** (21 Մարտին 20 Ապրիլ)
- Ոչինչ պիտի կարենայ աղարտել ձեր անխառն ժպիտը այսօր: Ձեր կենսութիւնը պիտի ըլլայ հաղորդական՝ ձեր շրջանակին մէջ:
- ☆ **ՅՈՒՆ** (21 Ապրիլէն 21 Մայիս)
- Փոխանակ ողբալու եւ յիշելու անցեալի «լաւ օրեր», ապագային ճանցեք ինքնավստահութեամբ: Վերջապէս, ոչինչ ունիք ղժգոհելու: Ուրախ եղէք:
- ☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս)
- Պիտի կարենաք երկու անգամ միջեւ հաշտութիւն գոյացնել՝ անոնց բացատրելով թիրիմացութեամբ պատահած միջոցէն անցնելու ըլլալը: Անոնք գոհ պիտի մնան ձեր բարեխօսութեան:
- ☆ **ԽԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս)
- Հաշտեցոյցի մը համար մտահոգ էիք, թէ կրնաք մեծագումար ըլլալ, բայց բարեբախտաբար նուազ հաշիւ մը պիտի ներկայացուի ձեզի: Այսուհանդերձ, եղէք խնայասէր:
- ☆ **ԱՌԻԻԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս)
- Ձեր գործերը ճամբու դրած էիք, պիտի ունենաք համեմատաբար յաջող եկամուտ եւ գործառնութիւն: Հետապնդեցէք ձեր կարգը գործի մարդոց հետ:
- ☆ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)
- Պիտի վերագտնէք հին օրերու ձեր բարեկամները, միասնաբար հաճելի օր մը պիտի ապրիք՝ վերջիչելով ձեր երիտասարդութեան օրերը: Միշտ այսպէս գուրաք եղէք:
- ☆ **ԿՇԻՈՒԳ** (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)
- Բարկացած էք անձի մը ինքնատիւնութեան համար, որ միշտ կ'ուզէ «ծածկուց իր կողմը քաշել»: Անոր հասկցուցէք, թէ ղուք ապուշ էք եւ չէք խաբուիր:
- ☆ **ԿԱՐԻՃ** (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)
- Երէ ձեր աշխատանքը գոհ չի ձեզի, ինչու՞ համար չէք փորձեր ուրիշ աշխատանքի մը համար նոր վարժութիւն կատարել: Պէտք ունիք փոփոխութեան:
- ☆ **ԱՂԵՂՆԱԻՈՐ** (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)
- Երէ ոմար ձեզի անյարմար խօսքեր ըսեն, մի՛ նեղուիր, որովհետեւ անոնք կը նախաձգին ձեզի ու այդ պատճառով կ'ուզեն ձեզ ցաւցնել: Անոնք եղէք:
- ☆ **ԱՅԾԵՆՋԻԻՐ** (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)
- Ապագային նկատմամբ ձեր անձկութիւնը եւ մտահոգութիւնը չքացած է այլեւս: Ամէն պարագայի, այնքան ալ մտահոգուելու պատճառ մը չունէիք արդէն:
- ☆ **ԾՈՎԱՆՈՅՇ** (21 Յունուարէն 19 Փետրուար)
- Ձեր ընկերը կամ ընկերուհին կը նկատէ, թէ այս օրերուն զիքը շատ կ'անտեսէք: Ձանցեք սքափիլ եւ հաստատել ձեր բնական ջերմութիւնը:
- ☆ **ՁՈՒԿ** (20 Փետրուարէն 20 Մարտ)
- Յիգիքական եւ հոգեկան լաւ վիճակի մէջ էք այսօր: Ձանցեք պահպանել ձեր այս վիճակը. ծայրայեղութիւններէ մի՛ ընէք, որպէսզի շուտով չզոյզաք:

ՕՐԱՏԵՏՐ

ՓԱՌԱՍՏՈՆ / ՅՈՒՅԱԶԱՆԳԵՍ / ԹԱՏՐՈՆ

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ «ՍՈՒՆՈ» ՄԵՆԱՏՐԱՄԸ ՀԱՆԳԻՍԱՏԵՍԻՆ ՀԵՏ ՍԵՒ ԵՐԳԻԾԱՆՔՈՎ ԿԸ ԲԱԺՆԵ ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՐՅԵՐ



Բեմադրիչ Շիշամ Ժապրի «Սուլո»ի ներկայացման ընթացքին

Լիքանանցի երիտասարդ բեմադրիչ Շիշամ Ժապրի այսօր կը սկսի ներկայացումներուն իր երկրորդ թատերախաղին՝ «Սուլո»ին, որուն ելոյթները կը շարունակուին մինչեւ 21 Յունիս:

Մենատրամի ձեւով հանդիսատեսին մատուցող այս թատերախաղը հեղինակութիւնն է բեմադրիչին, որ միաժամանակ է նաեւ պայն ներկայացող միակ դերասանը: «Սուլո» կը պատմէ պատմութիւնը երիտասարդի մը, որ կը գտնուի իր մօր տիրապետութեան տակ, կ'ապրի ընկերութեան մեկուսացած վիճակի մէջ, սակայն միաժամանակ ենթակայ է անոր ճնշումներուն: Ան արտաքին աշխարհին իր պատկերացումը կը կապէ՝ հիմնուելով իր մօր պատմութեան վրայ: Թատերախաղին դէպքերը կը սկսին այն պահէն, երբ կը մահանայ երիտասարդին մայրը, եւ ան կը կորսնցնէ արտաքին աշխարհին հետ իր կապը:

Հինգ կարճ արարներէ բաղկացած այս թատերախաղը սեւ երգիծանք մըն է, որ կը ներկայացնէ հերոսին կեանքին հինգ տարբեր հանգրուաններ՝ մանկութիւն, դպրոցական տարիք, սեռային կեանք, ինքնաճանաչում եւ թաւորում:

Բեմադրիչին իսկ բացատրութեամբ, հանդիսատեսին հետ ուղղակիօրէն կապ հաստատող օրէն կապ հաստատող թատերախաղ մըն է «Սուլո»ն, որ կ'ուզէ բաժնեկցիլ մարդկային ու ընկերային հարցեր եւ անհատի մը կապմատրման վրայ ազդող առօրեայ մանրամասնութիւններ:

Նշենք, որ «Սուլո»ի ներկայացումները տեղի կ'ունենան երեկոյեան ժամը 8:30ին, «Մետրիս» թատերասրահին մէջ:

ԱՅՍՕՐ

- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «ԹԷԿ Վիուզ», «Էսփաս Էս. Տէ.» ցուցարահ, մինչեւ 28 Յունիս:
- Թատրոն՝ «Սուլո», ժամը 20:30ին, «Մետրիս» բառերարահ, մինչեւ 21 Յունիս:
- «Յեսթիվալ Իթալիանո». երգահանդէս Սիեզիա Ռիգոնէ (սոփրանօ) եւ Ռոպերթօ Քալի (թենոր), ժամը 20:45, Սուրի «Ռեպ Զաուս»ի մէջ:
- Յուցահանդէս՝ «Թու զ'արքիս», Ֆրանսական Մշակութային կեդրոնին մէջ, մինչեւ 13 Յունիս:
- Կայանական մշակութային շաբաթ՝ ժամը 18:00ին, Սէն Ժոզեֆ համալսարանի «Փիեռ Ապու Խաթեր» սրահին մէջ:
- Գորգերու ցուցահանդէս՝ «Թափի տիւ Քոքազ», «Սըրտը» բանգարանին մէջ, մինչեւ 12 Յունիս:
- Ձեռնդման արուեստի ցուցահանդէս՝ «Էթրանժ մեյլանժ», Միշել Թաուրիլ յարգարումի արուեստի գործերը, «Էսփաս Էս. Տէ.» ցուցարահ, մինչեւ 7 Յունիս:

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՄՈՒՄԸ 5 Յունիս 1953

ԸՆԿԱԿԱՆ ԿԵԱՆԸ ՄԱՅԻՍ 28Ը՝ ԲՈՒԷՅԹԻ ՄԷՋ

Այս տարի Բուէյթը եւ բերաւ իր համեմատմանակցութիւնը Մայիս 28ի տօնակատարութեան. բուական մը, որուն մէջ ամփոփուած է հայ ժողովուրդի 6 դարերու երգած համագային իտեալին իրականացումը, բուական մը, որ կատարելու մամբողջական խորհրդակից է սուրբութեան ներկայութեան հայութեան ազատութեան գագուցներուն, ու վերջապէս բուական մը, որ եթէ չկերտուէր, բնականաբար գոյուրիւն չէր կրնար ունենալ նաեւ ներկայ Հայաստանը:

Արդարեւ, 28 Մայիսի երեկոյեան ժամը 8:00ին տանեակ մը ընկերներ երկու ինքնաշարժներով ուղղուցանք դէպի անպատճառ ծովակուռ ոչ շատ հեռու: Աւազին վրայ շտկուեան գիւղական տիպի սեղան մը՝ որուն շուրջ բոլորուեցանք, նստած՝ ծալապատիկ մարուր

աւազին վրայ: Ֆետայական խնկոյթի մը մանրանկարն էր կրծքս:

Իսկոյն սկսան յեղափոխական երգերը՝ որոնք լիաթող կ'ըլլէին մեր կուրծքերէն՝ թնդացնելով Բուէյթի լայնատարած անապատը: Եղան բաժակաճառեր, արտասանութիւններ, մենեթներ, որոնց հետեւեցաւ հայկական պարը իր տոհմիկ ինքնուրոյնութեամբ:




Մերք ընդ մերք սկաւառակներու միջոցով կը լսուէին հայկական դիւրիչ եղանակներ, որոնք մեր պարած ազգային մթնոլորտին մէջ, հոգեկան ապրումներ կը դրոշմէին մեր սրտերուն մէջ:

Գիշերը ուշատեւ վերջ գտաւ մեր անկախութեան յիշատակահանդէսը, որմէ ակամայ բաժնուեցանք՝ վերանորոգելով մեր անխախտ հաւատը Միացեալ ու Անկախ Հայաստանի իրականացման:

ԱՅՍՕՐ 5 ՅՈՒՆԻՍԻՆ

- 1860 - Գործադրութեան կը դրուի Ազգային Սահմանադրութիւնը:
- 1968 - Մահ ականաւոր դերասան Վահրամ Փափագեանի:
- 1981 - Մուլիմոյի (Փարիզի արուարձաններէն) հայկական եկեղեցիին առջեւ ռումբի պայթում: Պայթումը կը ստանձնէ «Թուրք Իսլամական Յեղափոխական Բանակը»:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր -



ՊԱՍԵԹՊՈԼ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՌԻԱՏԻ - ՍԱԺԵՍ ԱՒԱՐՏԱԿԱՆ 2-2

Լիբանանի պասեթպոլի տղոց ախոյանութեան աւարտական հանգրուանի շրջանում մրցում էին, որ տեղի ունեցաւ երկու երեկոյան Ռիատի դաշտին վրայ, դաշտին տէրերը 71-70 արդիւնքով պարտութեան մատնեցին ետք Սաժէսը, յաջողեցան արդիւնքը հաւասարեցնել՝ 2-2:

Հակառակ անոր որ Սաժէս Ա. կիսախաղին 42-32 արդիւնքով յառաջացած էր, Ռիատի մարզիկները պայքարելէ ետք տարին վերջնական յաղթանակը, պարտադրելով Հինգերորդ եւ ճակատագրական վերջին մրցումը, որ տեղի պիտի ունենայ վաղը՝ Ուրբաթ, Սաժէսի դաշտին՝ Ֆուադ Շեհապի մէջ, երեկոյան ժամը 20:45ին:

ՓԻՆԿ ՓՈՆԿ

ԼԱՐԱ ԵՒ ԼԻԶԱ ՀԱՍԱՆ ՔԱՌՈՐԴ ԱՒԱՐՏԱԿԱՆԻՆ

Մոն Լա Սալի մէջ տեղի ունեցող Լիբանանի փինկ փոնկի բաժակի մրցաշարին, երէկ, Հ.Մ.Լ.Մ. Պէյրուսի մարզիկները Լարա Քէչէպաշեան եւ Լիզա Պարիքեան իրենց արձանագրած երկուբանական յաղթանակներուն շնորհիւ ապահովեցին քառորդ աւարտականի իրենց տոմսերը: Նոյն ֆէշիլեան ցարդ չէ ապահոված քառորդ աւարտականին իր տոմսը: Լարա յաջողաբար պարտութեան մատնեց Պասմա Տապաթան (3-0) եւ Ռանա Մըրշին (3-0), իսկ Լիզա՝ Լիզա Հաժը (3-0) եւ Քրիսթել Ժալախը (3-0):

Նոյն ֆէշիլեան թէեւ յաջողաբար պարտութեան մատնեց Սթեֆանի Պարպարը (3-0) եւ Էլիան Աշամին (3-0), սակայն իր կատարած երրորդ մրցումին 3-0 արդիւնքով պարտութեան Ղատա Լէյլաթին:

Այսօր տեղի կ'ունենան աղջկանց հետեւեալ մրցումները. Լարա Քէչէպաշեան - Ռուպա Պարիքեան, Լիզա Պարիքեան - Ղատա Լէյլաթի եւ Նոյն ֆէշիլեան - Փաթիա Հաժ:

Մրցումները տեղի կ'ունենան ժամը 5:30ին:

ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Լիբանանի ֆուտբոլի ֆետերասիոնը, շարաքակտիկ իր գումարած ժողովին վաւերացնելէ ետք Ա. դասակարգի ախոյանութեան 22րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները, հրապարակեց յառաջիկայ երեք շաբաթներուն ընթացքին տեղի ունենալիք մրցումներուն յայտագիրը, որոնց արդիւնքներուն լոյսին տակ պիտի յայտարարուի 2002-2003 եղանակի ախոյանին անունը, ինչպէս նաեւ Բ. դասակարգ փոխադրուող երկրորդ խումբին ճակատագիրը (Պըրժի հետ):

Ստորեւ՝ այդ մրցումներուն ամբողջական յայտագիրը:

ՀԱՐԱԹ. 14 ՅՈՒՆԻՍ		
Օլիմպիք - Անսար	8:30ից	Պէյրուս
Նըժմէ - Ահո	8:30ից	Մ. Աւան
ԿԻՐԱԿԻ. 15 ՅՈՒՆԻՍ		
Սալամ - Պըրժ	4:45ից	Ժունիէ
Մապարա - Ախա Ալէյ	4:45ից	Պ. Համուտ
ՀԱՐԱԹ. 21 ՅՈՒՆԻՍ		
Օլիմպիք - Ահո	8:30ից	Պէյրուս
Նըժմէ - Անսար	8:30ից	Մ. Աւան
ԿԻՐԱԿԻ. 22 ՅՈՒՆԻՍ		
Սալամ - Ախա Ալէյ	4:45ից	Ժունիէ
Մապարա Պըրժ	4:45ից	Պ. Համուտ
ՀԱՐԱԹ. 28 ՅՈՒՆԻՍ		
Սալամ - Մապարա	4:45ից	Ժունիէ
Ախա Ալէյ - Պըրժ	4:45ից	Պ. Համուտ
ԿԻՐԱԿԻ. 29 ՅՈՒՆԻՍ		
Անսար - Ահո	4:45ից	Պէյրուս
Նըժմէ - Օլիմպիք	4:45ից	Մ. Աւան

ԱՆԳԼԻԱ - ՍԵՐՊԻԱ՝ 2-1

Ֆուտբոլի միջազգային բարեկամական մրցումի մը ընթացքին, Անգլիոյ ֆուտբոլի ազգային խումբը արձանագրեց դժուար յաղթանակ մը, երբ Լայպթըրի մէջ 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Սերպիան:

Հիւրընկալ կազմը իր յաղթանակի կողմ նշանակեց մրցումին աւարտէն եօթ վայրկեան առաջ, շնորհիւ՝ ձօժ Բոլի: 35րդ վայրկեանին Սթիւեն Ժերարը նշանակեց Անգլիոյ եւ մրցումին առաջին կողմ, իսկ Նենար Եսթրոպիլը հիւր կազմին հաւասարութեան կողմ (45րդ), օգտուելով Անգլիոյ տկար պաշտպանողականէն:

Նշենք, թէ շաբաթավերջին Անգլիա եւրո - 2004ի գտումի մրցում չունի կատարելիք:

●ՌՈՒՍԻՈՅ Ֆուտբոլի ազգային խումբին մարզիչ Վալերի Կապան յայտնեց, թէ Շարաթ օր Զուլցերիոյ մէջ տեղի ունենալիք մրցումին (Եւրո - 2004), վեթերան յետասպազ վիթթոր Օնոփօ վիբուրը ըլլալով դաշտ պիտի չկարենայ ներկայանալ:

33 տարեկան Օնոփօ, որ վերջերս Ռուսիոյ ֆուտբոլի ազգային խումբին հետ նոր մրցանիշ մը հաստատեց, 105րդ անգամ ըլլալով կրելով անոր շապիկը, իր կառուցման Ռուսիոյ վայրկեանին հետ փոխադրուեցաւ Բ. դասարանի, հակառակ անոր որ Սպանիոյ ֆուտբոլի 2002-2003 եղանակի ախոյանութեան աւարտին մնացած է երկու հանգրուան:

ԹԵՆԻՍ. ՌՈԼԱՆ ԿԱՐՈՍ

ԱՅՍՕՐ՝ ԱՂԶԿԱՆՑ ԿԻՍԱՒԱՐՏԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Ռոլան Կարոսի տղոց քառորդ աւարտականին, սպանացիներ Ալպերթո Քոսթա եւ Խուան Ֆերերո ապահովեցին կիսաւարտական հանգրուանին իրենց տոմսերը:

Քառորդ աւարտականի առաջին մրցումը, որ եղաւ զուտ սպանական, Թոմի Ռոպրետո 2-6, 3-6, 6-4, 7-5 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մը կրեց Քոսթային:


Տիտղոսակիր Քոսթա, հակառակ առաջին երկու սեթերը կորսնցնելուն, յաջողեցաւ ապահովել վերջնական յաղթանակը՝ 3 ժամ 29 վայրկեանի ընթացքին:

Կիսաւարտականին, Քոսթա դարձաւ իր դէմ պիտի ունենայ ազգակից մը՝ Ֆերերոն, որ նոյնքան ժամանակի մէջ 6-1, 3-6, 6-1, 5-7 եւ 6-4 արդիւնքով պարտութեան մատնեց չիլիցի Ֆեռնանտո Կոնսալեսը, որ ձախողեցաւ դառնալ առաջին չիլիցին, որ Մարսելո Ռիուսին ետք (1998) կրան շքանշան մրցաշարի մը կիսաւարտականին կը հաս-



Ֆերերո (ձախից) կը փորձէ մխիթարել Կոնսալեսը

նի: Այսօր տեղի կ'ունենան աղջկանց կիսաւարտականի մրցումները (ժամը 15:00էն սկսեալ): Առաջինին, աշխարհի թիւ 1ը՝ ամերիկացի Սերենա Ուիլյամս կը ձակատի պէլճիքացի Ժուսթին Դէնիսի դէմ, իսկ երկրորդին՝ Նատիա Փերովա (Ռուսիա) կը ձակատի պելճիքացի Բիմ Բիլիսթրոմի դէմ:



Ալպերթո Քոսթա կը սօցէ իր յաղթանակը

ԻՏԱԼԻԱ ԿՐ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՖԻՆԼԱՆՏԱՅԻ ԴԷՄ ՄՐՑՈՒՄԻՆ

Պատրաստուելու համար յառաջիկայ Զորեքշաբթի, 11 Յունիսին Ֆինլանտայի դէմ (Հելսինքի մէջ) տեղի ունենալիք եւրո - 2004ի գտումի մրցումին (Ք. խմբակ), իտալիոյ ֆուտբոլի ազգային խումբը միջազգային բարեկամական մրցում մը կատարեց Հիւսիսային Իրլանտայի դէմ եւ Բամփուպասոյի մէջ (Հարապալին իտալիա) 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը, շնորհիւ՝ Պեռնարո Բոնապարտի (31րդ) եւ Մարքո Տելլիքիոյ (67րդ) նշանակած կողմերուն:

Այս մրցումին բացակայած շատ մը մարզիկներ սակայն, որոնց կարգին՝ Ֆրանչեսկո Թոթի, Ալեսանտրո Նեսթա եւ Ջիանլուիջի Պիլիպի գտումի այդ մրցումին համար նկատարանութեան մարզիչ Ջիովանի Թրափաթոնի կողմէ:

Վիբուր մարզիկները շարքին են՝ Ֆիլիպո Ինցալի եւ Քրիսթիան Վիբերի: Իտալիա այժմ կը գրաւէ իր խմբակին 2րդ դիրքը, հինգ կէտով ետ մնալով պարագլուխի դիրքը գրաւող Կալչեսին, որ ունի 12 կէտ:

Փորթուգալի իր տոմսը կարենալ ապահովելու համար, իտալիա իր կատարելիք յաջող չորս մրցումներէն ոչ իսկ մէկ կէտ պէտք է որ կորսնցնէ, այսպէս անոր առաջնութիւնը բաւական կրնայ դժուարանալ:

Յամենայդպէս, յառաջիկայ 6 Սեպտեմբերին տեղի ունենալիք իտալիա - Կալչեսի ճակատումը պիտի ըլլայ ճակատագրական, մանաւանդ՝ իտալիոյ համար:

Ստորեւ՝ Թրափաթոնի կողմէ նկատի առնուած մարզիկները՝ Ֆինլանտայի դէմ տեղի ունենալիք մրցումին:

ԲԵՐԴԱՊՈՒՆԵՐ՝ Ջիանլուիջի Պիլիպի (Եւրոպէն-Եւրոպէն)

ՆԵՏԵԼԱՐՁԱՒ

ՖԱՊՐԻՍ ՍԱԼԱՆՍՈՆԻ ԽՈՐՀՐԳԱՒՈՐ ՄԱՀԸ



Ֆապրիս Սալանցոն

Գերմանիոյ հեծելաքաշի շրջավայրին նախօրեակին, որ սկսաւ Երեքշաբթի, 3 Յունիսին, ֆրանսացի հեծելաքաշի Ֆապրիս Սալանցոն, որ մաս կը կազմէ ֆրանսական Լա Պոլիսի մէջ խումբին, մահացաւ: Տրեստընի մէջ պանդոկին մէջ, անոր սենեակիցը եւ խմբակիցը՝ Միլվէն Շաւանէլ յայտնեց, թէ երբ առաւօտեան արթնացած է, մահացած գտած է 23 տարեկան Սալանցոն:

Գերմանիոյ ոստիկանութիւնը յայտնեց, թէ քննութիւններ կը կատարէ՝ մահուան պատճառները բացայայտելու համար, մինչ հանգուցեալին խումբը յայտնեց, թէ շրջավայրին կը քաշուի:

ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐ

●ՄԵՔՍԻՔԱՅԻ մէջ տեղի ունեցող աշխարհի ծանրաբարձութեան երիտասարդներու ախոյանութեան մրցաշարին, հայաստանցի Արթուր Դանիելեան 62 քկ. դասակարգին մէջ արժանացաւ պրոնզէ մետալին, բարձրացնելով 275 քկ. (122,5 + 152,5):

●ՈՒՔՐԱՆԻՈՅ Տոնէթթը քաղաքի «Հարաւային Արդիւնաբերական Ընկերութեան» նախագահ, նախկին ֆուտբոլիստ եւ այժմ ֆուտբոլի հովանաւոր՝ Օլէկ Մկրտչեան, իբրեւ նիւթական քաջալերանք, յիսուն հազար ամերիկեան տոլար նուիրեց Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբին:

Նշենք, թէ Մկրտչեան, որ Տոնէթթի Մեթալուրկ խումբին հիմնադիրներէն էր ղեկավարներէն մէկն է, երկու տարիներէ Վեր կը հովանաւորէ Բանանց եւ Սպարտակ խումբերը:

●ՊՈՍԵՆՈՅ մայրաքաղաք Սարաեւոյի մէջ աւարտեցաւ ճատրակի միջազգային մրցաշարը: Մրվաքիա բնակող Սերգէյ Մովսիսեան վեց կէտերով հանդիսացաւ փոխախոյան: Ան միայն պարտուեցաւ ախոյանէն՝ ծագումով պոսնիացի հոլանտացի Իվան Սոկոլովէն:

ՊՐԱԶԻԼ ՈՉ ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ԿԱԶՄՈՎ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՆԱՅ ՄԻՋՅԱՄԱԲԱՄԱՍԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՔԻՆ



Ռոնալտինիո

Յառաջիկայ Յունիս 18էն 29 Յրանսայի մէջ տեղի ունենալիք Միջցամաքամասային ֆուտբոլի մրցաշարին իր մասնակցութիւնը բերող աշխարհի ախոյան Պրապիլ առանց իր կարգ մը աստղերուն է համեմատաբար աւելի տկար կազմով մը պիտի մասնակցի այդ մրցաշարին:

Մարտի 2 Քարլոս Ալպերթո Փարէյրա, որ երէկ յայտարարեց իր մարզիկներուն անունները, իր կազմին դուրս ձգեց շարք մը մարզիկներ: Ա. Մէ. Միլանի միջնապահ Ռիվալտո հանգիստի մէջ է: Տարուան լաւագոյն ֆուտբոլիստը՝ Ռոնալտինի, որ իր ակումբին՝ Ռեալ Մատրիտի հետ Սպանիոյ ախոյանութեան մրցումներուն կը մասնակցի, շատ հաւանաբար մրցաշարը սկսելէն ետք միայն միասնայ ազգային խումբին իր խմբակիցներուն: Պայէր Միլանի միջնապահ Չէ Ռոպերթո եւ Ռոքէ Ժունիոր (Ա. Մէ. Միլան) վիրաւոր են:

Անոնց փոխարէն Փարէյրա իր կազմին միացուց «պրապիլցի» մարզիկներ Քլեպըրսը (Աթլետիքո Փարանաէսէ) եւ Ռիքարտինիոն (Սան Փաուլօ):

Փարիկ Սէն Ժերմէնի մարզիկ Ռոնալտինի, որ շատ հաւանաբար յառաջիկայ շաբաթներուն իր կազմը լքելով միասնայ Մանչեսթըր Եւրոպիոյի, յառաջապահ գիծին վրայ իր կողքին պիտի ունենայ Ատրիանոն (Փարմա):

Պրապիլի խմբակին մաս կը կազմեն՝ Քամերուն, Միացեալ Նահանգներ եւ Թուրքիա, իսկ միւս խմբակին՝ Յրանսա, Ճափոն, Նոր Զելանդիա եւ Քոլումբիա:

Ստորեւ՝ Փարէյրայի կողմէ նկատի առնուած մարզիկները:

ԲԵՐԴԱՊՈՒՆԵՐ.- Տիտա (Ա. Մէ. Միլան), Ֆապիո (Վաքո Տա Կամա) եւ Ժուլիո Սեպար (Յամենկօ):

ՅԵՏԱՊՈՒՆԵՐ.- Պելլեթթի (Վիարէալ), Ֆապիո Օրելիո (Վալենսիա), Ժուան (Պայէր Լեւերքուզըն), Լուչիո (Պայէր Լեւերքուզըն), Ֆապիո Լուչիանօ (Քորինթիանս), Էտու Տրասէնա (Քրուպէրո), Մորիսիո (Քրուպէրո) եւ Քլեպըր (Քորինթիանս):

ՄԻՋՆԱՊՈՒՆԵՐ.- Էտուարտո Քոսթա (Պորտո), Էմերսոն (Ա. Էս. Ռոմա), Ատրիանօ (Աթլետիքո Փարանաէսէ), Ալեքս (Քրուպէրո), Տիտի (Վիթորիա), Քլեպըրսը (Աթլետիքո Փարանաէսէ) եւ Ռիքարտինիո (Սան Փաուլօ):

ՅԱՌԱՋԱՊՈՒՆԵՐ.- Ռոնալտինի (Փարիկ Սէն Ժերմէն), Ատրիանօ (Փարմա), Ժիլ (Քորինթիանս), Լուիս Ֆապիանօ (Սան Փաուլօ) եւ Իլան (Աթլետիքո Փարանաէսէ):

